Արձանագրություն N3.1

« ԱԳԿԿ-ՀԲՄԾՁԲ-01/19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01 ապրիլի 2019թ. ժ. 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Եփրիկյան, Ա. Հայրապետյան, Մ.Խարատյան, Ա.Նազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Օրդուխանյան

« ԱԳԿԿ-ՀԲՄԾՁԲ-01/19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ձևով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված «ԱԳԿԿ-ՀԲՄԾՁԲ-01/19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում որպես ընտրված մասնակից ճանաչված "Ofek Aerial Photography (1987)" LTD ընկերությանը 2019 թվականի մարտի 13-ին gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում, և ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքով սահմանված ժամկետում "Ofek Aerial Photography (1987)" LTD-ն չի ներկայացրել պայմանագրի ապահովումն ու չի ստորագրել պայմանագիրը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի 3-րդ կետի՝ (եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից), "Ofek Aerial Photography (1987)" LTD-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, և ընթացակարգը հայտարարվում է չկայացած:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել
« ԱԳԿԿ-ՀԲՄԾՁԲ-01/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Օրդուխանյանին:
Հեռախոս՝ 060-474142:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@cadastre.am:
Պատվիրատու՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0,

Հանձնաժողովի՝
Նախագահ՝ _____ Հ. Հովհաննիսյան
Անդամներ՝ _____ Ա. Հայրապետյան
_____ Ա. Եփրիկյան
_____ Մ. Խարատյան
_____ Ա. Նազարյան
Քարտուղար՝ _____ Լ. Օրդուխանյան